

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Սա՛կ նոր կարողիկոսի առաջիկայ գործունեութեան մասին.—Կլիկիայի ազգային վարժարանները.—Ծաղկից կոսորածներ Զեյթունում.—Մակեդոնական հոգևորականները եւ ուսուցիչները.—Եւրոպական դիպլոմատիայի քիւրիասիրտները.—Ամերիկայի ստացած մի արտօնութիւնը.—Քուլզարական նոր միւնիստրութիւն եւ անմիջական բանակցութիւններ Թիւրքիայի հետ.—Հակաուսթիական ցոյցեր Իսպիայում.—Հակաւաքստական ցոյցեր Խորվաթիայում:

Մօտ ինչնր տարի թափուր մնալուց յետոյ՝ Սա՛կ կաթողիկոսական աթոռը վերջապէս բռնուեց:

Ժամանակին մենք տեղեկութիւն ենք տուել մեր ընթերցողներին Սահակ կաթողիկոսի ընտրութեան և հաստատման, ինչպէս և նրա Սիւս հասնելու մասին: Ապրիլի 20-ին նա օծուեց, իսկ 27-ին ահազին բազմութեան ներկայութեամբ կատարեց անդրանիկ մեռած օրհնութիւնը: Դրանով կարելի է վերջացած համարել հարցի ձևական ու կրօնական կողմը, և այսուհետև պէտք է սպասել, թէ ինչ գործ կը կատարի նոր կաթողիկոսն իր ընդարձակ թեմում:

Ընդունելով հանգերձ թիւրքական բեժիմի ծայրայեղ յոռի կողմերը, մենք հաւատացած ենք, որ Կլիկիայում կարելի է գործ կատարել: Այն վստահութիւնը, որ անձամբ վայելում է սուլթանից Սահակ կաթողիկոսը, պէտք է բաւական զիւրացնի նրա գործունէութիւնը: Անելու շատ բան կայ Կլիկիայում: «Տանն Կլիկիոյ» կաթողիկոսի իրաւասութեան տակ գտնուող թեմի տարածութեան մասին գաղափար տալու համար պէտք է ի նկատի ունենալ, որ նրա սահմանները հիւսիսից հասնում է Եօզղազ և Դիվրիգ, հարաւից՝ Անտիոքի, Հալէբ, արեւմուտքից՝ Մերսին, արեւելքից՝ Մալաթիա, Հիւսնի-Մանսուր, Այնթաբ: Զը պէտք է մոռանալ, որ այդ տարածութեան կենտրոնում է գտնու-

ւում Զէյթունը, և որ մի քանի տարի անց՝ Կիլիկիան կը կտրուի Բաղդադի երկաթուղիով *)։

Կիլիկիայի նոր կաթողիկոսի՝ անելիքների մէջ ամենաառաջին տեղը պէտք է բռնի կրթական գործը։ Կիլիկիայի ժողովրդին պէտք է տալ ժամանակակից պահանջներին համապատասխան կրթութիւն։ շոգու, էլեքտրականութեան և տնտեսական մրցումի դարում պէտք է կեանքի կռիւ համար պատաստել սերունդները և ոչ խուցերում և դիւանատներում փակելու համար։ Իսկ կրթութիւնն այդ ուղղութեամբ տանելու համար պէտք է պատրաստուած ոյժեր գրաւել, պէտք է բարուրդել վանքապատկան կալուածները, բազմապատկել դրանց արդիւնաւորութիւնը, հասոյթատուութիւնը։ Մինչև այժմ՝ Տանն Կիլիկիոյ կաթողիկոսները աւելի շուտ աւազակապետներ էին, քան ազգապետներ, կեղեքիչներ էին, քան վարիչներ։ Հէնց այդպիսին էր վերջին կաթողիկոս Մկրտիչ Ա., որի արարքների վրայ լոյս է սփռում հետեւեալ լուրը, որ տպուած էր Պոլսի թերթերում։

— Կիլիկիոյ աթոռը իրեն սեպհական 10,000 կանգուն ընդարձակութեամբ ագարակ մը ունի, զոր ժամանակին Տ. Մկրտիչ կաթողիկոս իր անունով արձանագրած էր, եւ որ անոր մահէն յետոյ մահլիճ նկատուեով՝ ածուրդի հանուած էր ձեռնհաս պաշտօնատան կողմէ։ Այս ագարակը սակայն վանքին զոյուծեան պայման ըլլալով, պետական պաշտօնական գրեր երեւան հանուած էին ապացուցանող թէ այս ստացուածքը հանգուցեալ կաթողիկոսին անձնական գոյքը չէր, այլ վանքին երկար ժամանակեայ սեպհականութիւնը։ Ուստի Ս. Պատրիարքը, ածուրդի սկսած ըլլալու մասին Սիսէն առած տեղեկութեանց վրայ պէտք եղած դիմումը ըրած ըլլալով, նախընթաց օր պատասխան ստացած է թէ մինչև որ քննուին այդ պաշտօնական գրերը, ածուրդը յետաձգուի, եւ իրողութիւնը հետագրած է Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին։

Թէ ինչ ողբալի վիճակի մէջ են Կիլիկիայի ազգային վարժարանները, այդ կարելի է տեսնել հէնց նրանից, որ Տանն Կիլիկիոյ վեհաբանի հալանու տակ գտնուող միակ ժառանգաւորաց դպրոցը առ 1 յունուարի 1903 թ. ունեցել է ընդամենը 20 «մանչ», 2 (երկու) ուսուցիչ **). այդ դպրոցի պահպանութեան համար նշանակուած ամսական 843 դուրուշ ***). ծախսն անգամ անկարող է եղել հայթայթել Կիլիկիայի ամբողջ թեմը, ուստի կէսը, 432 դ., տրուել է Պոլսի պատրիարքարանից։

Առհասարակ նիւթապէս անմխիթար են Կիլիկիայի մեր

*) Տես «Մուրճ», 1902 թ., № 2, Երա. Տեսութ. երես 233.

**) «Վիճակագրոյց» պատրիարքարանի։

**) 100 դուրուշ = 1 ոսկի = մօտ 8 ռուբլի։

ազգային շարժումները, որոնց թիւը ըստ «վիճակացոյցի» հասնում է 135-ի, 10,425 աշակերտներով, 251 ուսուցիչներով և 100 վարժուհիներով: Այդ բոլոր վարժարանների ամսական ծախքը հաւասար է եղել 60,120 ղուրուշի, իւրաքանչիւր վարժարանին ընկնում է 445 ղուրուշ (մօտ 30 ռուբլի), ուրեմն այն գումարով, որ մեր միլիոնատէրերը տալիս են իրանց խոհարարներին՝ Կիլիկիայում պահւում են մի քանի ուսուցիչներ և վարժուհիներ... Միթէ դժուար է առաջուց գուշակել, թէ ինչ ճարակտուրներից է բաղկացած Կիլիկիայի մատաղ սերունդը կրթող դասը: Այդպիսի ուսուցիչները հազիւ թէ մի-մի ճրագ հանդիսանան այդ խաւար, բայց բնութիւնից կորովի ձիւրքերով օժտուած ժողովրդի մէջ:

Թէ տգիտութեան և անտէրութեան ձեռքից ինչ հարուածներ են հասնում ազգութեան, զրա մի ապացոյցը տեսնում ենք Պոլսի «Փունջ» թերթում Զէյթունից տպուած մի թղթակցութեան մէջ. Զէյթունում հազարաւոր մանուկներ են կոտորուում հէնց միայն ծաղիկ հիւանդութիւնից: Եւ պատրիարքարանը չի կարողացել մի այդպիսի չնչին պատճառից առաջ եկած աղէտի առաջն առնել: Ախր այդ դէպքում զէյթունցիին լսօմ զէնք չի պահանջում, այլ լանցետով զինուած մի երկու մարդ, որ գիտեն, թէ ինչպէս են ծաղիկ կտրում. այդ դէպքում պատրիարքարանից վիթխարի գումարներ չեն պահանջուում—մի երկու հորթ՝ պատուաւորի թարմ հիւթ ստանալու համար: Անտէրութիւն, անփութութիւն—ահա աղէտի պատճառը: Այն, ինչ զլացել է կատարել պատրիարքարանը, դժուար, չէ որ իրազօրծի իսկոյն և եթ կաթողիկոսը:

Ամեն դասակարգ որոշ պատմական դեր ունի կատարելու, այդ դերը չի անցել Թիւրքիայում ապրող ռայայի հոգևորականութեան համար: Այդ ճշմարտութիւնը լաւ ըմբռնել էին Մակեդոնիայի բոլղարները, որոնք բաժանուեցին յունական եկեղեցուց և ինքնազուլիս, ազգային եկեղեցի կազմեցին: Օգտուելով թիւրքաց օրէնքների որոշ յօդուածներից, մակեդոնական հոգևորականութիւնը՝ մնալով լեզալ հողի վրայ՝ վերջին քառորդ դարում զարմանալի գործունէութիւն ցոյց տուեց: Քահանայ, եպիսկոպոս, ուսուցիչ ձեռք ձեռքի տուած՝ առաջ տարան ժողովրդի կրթութեան գործը, չը խփելով իրանց աչքերը ժամանակակից պահանջների առաջ, և պատրաստեցին նոր աշխարհահայեցողութեամբ մի սերունդ: Այդ քառորդ դարի ընթացքում թիւրք կառավարութիւնը հակապետական ոչինչ չի նկատել ժողովրդական այդ հոգատարների գործունէութեան մէջ: Եւ Լանկարձ լեզալ գործիչները պատասխանատու են համարւում

մակեդոնական շարժման մէջ, որ արդիւնք է վերջին 25 տարուայ ընթացքում թիւրք կառավարութեան գործադրած անլուր բռնութիւններէ: Միայն Սոլունում թիւրք կառավարութիւնը բանտարկել է մօտ 500 ուսուցիչ և 30 պրոֆեսսոր: Բուլղարական ամբողջ էկզարխատը կասկածի տակ է. քիչ էր մնում բանտարկուի և արքայութի Ստրումնիցի միտրոպոլիտ Գերասիմը: Հազարաւոր անմեղներ շարունակում են բանտարկուել, սպանուած մարդկանց, բռնաբարուած կանանց թիւը օրէցօր աւելանում է, ամբողջ գիւղեր հիմնայատակ են լինում...

Թիւրքասէր էր Եւրոպան, երբ խանգարեց Ռուսաստանին կնքել Սան-Ստեֆանօի դաշնագիրը և փոխարէնը տուաւ ռայայի ձեռքը Բերլինի վեհաժողովում մշակուած յօդուածները. թիւրքասէր էր և յետոյ, երբ սուլթանը բոլորովին հակառակ կերպով էր բացատրում այդ յօդուածները՝ բարենորոգումների փոխարէն բռնաջնջում գործադրելով: Թիւրքասէր է և այժմ, թիւրքասէր կը լինի և ապագայում, որովհետեւ Եւրոպայի շահն է պահանջում այդ: Իսկ ինչ է անում Ամերիկան. — ոչինչ կամ այնպիսի մի չնչին բան, ինչպիսին տեսնում ենք հետեւեալ լուրից, որ տպուած է արտասահմանեան թերթերից մէկում.

Մ. Նահանգների կառավարութիւնը վերջերս սկսել է յարգել տալ իր իրաւունքները սուլթանի մօտ: Ապրիլի 30-ին Պոլսի ամերիկեան դեսպանը հաղորդում է, թէ տաճիկ հպատակութիւնից ամերիկեան քաղաքացի դարձած հայերը իրաւունք ունեն ծամպորդել թիւրքիայի մէջ իրանց քաղաքացիութիւնը պահելով: Մայիս 11-ից էլ հեռագրում է, թէ սուլթանը արտօնութիւն է տուել՝ ամերիկեան քաղաքացի եղած տաճիկահպատակների մօտիկ ազգականներին (զաւակ կամ կին) Ամերիկա մեկնելու: Արդէն 27 ընտանիքներ ծանապարհ են ընկել, եւ ուրիշներն էլ պատրաստում են մեկնելու:

Ամերիկեան կառավարութիւնը իրաւունք է ստացել նաեւ բազմաթիւ հիւպատոսական գործակալներ նշանակելու եւ հնախօսական պեղումներ կատարելու Եփրատի շրջակայքում:

Լ. Ս.